Գևորգ Տեր-Գաբրիելյան

Մասնակցայնություն և թափանցիկություն

Այսօր խոսելու ենք, ինչպես ինձ հանձնարարված է, մասնակցայնության և թափանցիկության մասին: Իհարկե, դա չափազանց մեծ թեմա է, և մի թեման, երևի, ավելի շատ կկարողանանք քննարկել, քան երկուսը միասին: Բայց ամեն դեպքում, ես երկու հասկացություն էլ այստեղ գրեմ, հետո տեսնենք՝ ինչ ենք անում:

Մասնակցայնություն և թափանցիկություն:

Իմաստ չունի ցանկացած այսպիսի հասկացություններ և արժեքներ դիտարկել (որպես այդպիսին) առանձին վերցրած, այսինքն՝ լավագույնը գոնե դրնանց և ինչ-որ մեկ այլ հասկացության դիալեկտիկ հարաբերակցությունը մոդելավորելն է և : Օրինակ՝ ինձ համար շատ հեշտ է մոդելավորել, թե թափանցիկությունն ինչին է վերաբերվում:

Թափանցիկությունը առնչվում է մեկ այլ շատ կարևոր և հայտնի հասկացության՝ կոնֆիդենցիալությանը (խորհրդապահությանը): Այսինքն՝ առանց խորհրդապահությունը հաշվի առնելու թափանցիկությունը, երբ սկսում են տարփողել, ստացվում է բավականին աբսուրդ իրադրություն: Այլ կերպ ասած՝ պահանջում են պետական գաղտնիքները բացահայտել և այլն և այլն: Սովորաբար այդպես չի լինում: Դրա համար այս դիալեկտիկ հարաբերության մեջ է պետք դիտարկել այս երկու հասկացությունը: Ինչ վերաբերում է մասնակցայնությանը, այստեղ ես ավելի մեծ դժվարություն ունեի գտնելու, թե որն է նրա դիալեկտիկ հարաբերակիցը:Բայց ես որոշեցի, որ առաջնորդությունն է: Եվ ինչպես տեսնում ենք,սրանք այդպես հականիշային հարաբերակցության մեջ չեն, ինչպես սրանք. սա ավելի հականիշային հարաբերություն է, սա ավելի ոչ 180 աստիճանով իրար հակադիր հարաբերություն է: Հիմա, ես, նախևառաջ, ուզում եմ խոսել սրա մասին, որքան ժամանակ կմնա՝ կանդրադառնանք նրան, եթե ժամանակ չմնա, ուրիշ հանդիպում կկազմակերպենք:

Սրա մասին ես ինչպե՞ս եմ ուզում խոսել. ես ուզում եմ սկզբում պատկերել մասնակցային առաջնորդական իրադրության իդեալական տարբերակը: Պիտի ասեմ, որ այդ իդեալական տարբերակը մեզանում կա պատկերված «Համակարգված մտագործունեություն և մեթոդաբանություն.կրեատիվ խաղեր» գրքում: Ահա սա է՝ այ ա՛յս նկարն է, որը կոչվում է **սահող գեներալի սկզբունքը**: Հիմա ես մոտավորապես սա նորից կպատկերեմ:

Ինչպիսին է այն. պատկերացնենք, որ կա թիմ: Սրանք թիմի անդամներն են: Սահող գեներալի սկզբունքն ասում է, որ թիմի անդամները միմյանց հարաբերվում են որոշակի առումներով. այդ առումներից մեկն այն է, որ նրանք ունեն ժամանակավորապես տվյալ ծրագիրն իրագործելու համար: Տվյալ, ասենք, այստեղ, նպատակով արդեն կա ծրագրի սխեման՝ ինչ են ուզում անել, նրանք ունեն ֆունկցիոնալ բաժանում: Թիմային կամ խմբի անդամների միջև ֆունկցիոնալ բաժանումն ինչիպիսի՞նն է լինում. մեկը, լինում է, հանդիսանում է գաղափարների գեներատոր, այս մեկն անընդհատ գաղափարներ է ստեղծում, մյուսը այն

ֆունկցիան է, որը կոչվում է «կառուցող» (կոնստրուկտոր)։ Նա վերցնում է տարբեր գաղափարներ, տարբեր խնդիրներ և այլն և այլն, և մեծ պատկերն է կառուցում։ Երրորդը կարող է լինել քննադատ, (երբեմն անվանում են դեստրուկուտոր). նա անընդհատ կասկածի է ենթարկում այն, թե ինչ է կատարվում խմբի մեջ։ Չորրորդին մենք սիրում ենք անվանել «տանկ» (չակերտավոր), որովհետև սա այն մարդն է, ով վերցնում է այս գաղափարները, և կյանքում իրագործելու մեջ է ուժեղկարողանում է կյանք դուրս բերել։

Եվ այստեղ, ըստ նպատակահարմարության, կարող են լինել բազում այլ ֆունկցիաներ . մարդիկ այսպիսի ֆունկցիաներ են ընդունում, ընդ որում՝ կարող են տեղերը փոխվել, այսինքն՝ այն մարդը, որը մի ծրագիր իրականացնելու ժամանակ գաղափարների գեներատոր էր, հետո կարող է դառնալ դեստրուկտոր կամ կարող է դառնալ տանկ, դառնալ ,ասենք, այլ ֆունկցիաներ կատարող։ Ասենք, այստեղ կարող է լինել ռեսուրսի մատակարարող, այսպես ասած՝ մատակարար, և այլն և այլն։

Հիմա, ո՞վ է իրենցից առաջնորդը։ Սահող գեներալի սկզբունքը հենց դա՛ է նշանակում. որ նայած, թե որ պահին ո՛ր ֆունկցիան է ակտուալիզացած, այդ պահին էլ առաջնորդը դառնում է այդ ֆունկցիայի կրող։ Այսինքն, այն պահին, երբ գաղափարներ են պետք, կազմակերպչական ողջ գործունեությունը գաղափարների գեներատորն է կազմակերպում։ Այն պահին, երբ արդեն պետք է ծրագիրը կառուցել, մյուսն է դառնում առաջնորդ։ Բոլորը համաձայնությամբ ենթարկվում են սրան, և այսպես պտտվում է կամ փոխվում են այս ֆունկցիաները։ Ուրեմն, սա՝ սահող գեներալի սկզբունքը, առաջնորդության և մասնակցայնության փոխկապակցվածության իդեալական տարբերակն է։ Այստեղ ավելորդ ոչ ոք չկա, ընդհակառակը, կարող է պետք լինել հավելյալ մարդկանց ներգրավե (և այլն), և այստեղ ոչ ոք չկա, որ, այսպես ասած, ունենա բացարձակ իշխանություն, բացարձակ իշխ. ըստ նպատակահարմարության է փոխվում։

Երբ մենք փորձում ենք պատկերացնել ինչ-որ բանի իմաստն ու բովանդակությունը, միշտ կարևոր է իդեալն ունենալ մտքում։ Այստեղ փոքր խումբ է նկարված։ Ընդհանրապես, պիտի ասեմ, որ մենեջմենթի լավագույն համակարգերը ասում են, որ հինգից կամ երեքից տասներկու հոգի, միջինում յոթ հոգի լավագույն թիմային մասշտաբն է մարդկության մեջ։ Բայց մենք գիտենք, որ հսկայական հանրություններ են, չէ՞, ուրեմն, եթե այս իդեալով շարունակեինք, ինչպե՞ս պիտի այդ հանրությունները պատկերվեին կամ ընդգրկվեին սրա մեջ։ Սա նշանակում է, որ այս նույն մարդը նաև մեկ այլ այսպիսի շրջանակի մեջ է ընդգրկված, հա՞, և այս մեկը մեկ այլ շրջանակի մեջ է ընդգրկված, և այդպես։ Սա կլիներ գործունեական հասարակության իդեալական պատկերի ինչ-որ մի օրինակ և, բնականաբար, ոչ ընդամենը երկու. կարող է լինել երեք, չորս, հինգ տարբեր բազում տարբեր շրջանակների մեջ։ Բայց այստեղ կա ինչ-որ սահման, թե ինչքան շրջանակների մեջ կարող է մի մարդն ընդգրկված լինել իր որոշակի տարբեր ֆունկցիաներով։ Ընդ որում, այստեղ նա, ինչպես գրեցինք, դեստրկուտոր է, իսկ այստեղ, չգիտեմ, ասենք, հաշվապահ։

Ինչպե՞ս է դա, ո՞րն է սահմանը, ինչքա՞ն բան կարող է մարդը, ինչքա՞ն ֆունկցիաներում կարող է միաժամանակ մասնակցել: Եվ նա կարող է մասնկացել՝ նայած ով ուինչքան. մարդ կա, որ կարող է շատ տարբեր շրջանակներ-ֆունկցիաների մեջ մասնակցել, իսկ մարդ կա որ, չէ, ավելի քիչ: Նա սիրում է ավելի նեղ, ավելի հստակ, այսպես ասած, իր ֆունկցիաների հստակեցում, չի ուզում չափից դուրս տեղերում մասնակցել: Սա իրոք հարց է առաջանում: Երբ մենք խոսում ենք մեծ մասնակցային համակարգերի մասին (որովհետև դուք գիտեք, որ արևմտյան երկրներում, ինչպես նաև Հայաստանում, բայց, նախևառաջ, զարգացած ժողովրդավարություններում, ասենք, ընտրողների միայն ինչ-որ մասն է մասնակցում ընտրությունների: 40, թե 30, թե 20, թե 50-ից ավել տոկոսն է մասնակցում՝ ասում են վա՛յ, էս ի՛նչ ակտիվ ընտրություններ էինրովհետև մարդիկ որոշում են, որ իրենք տվյալ պահին մասնակցայնության հավես չունեն, կարիք չունեն, վստահում են կամ չեն հետաքրքրվում և այլն և այլն: Այսինքն, այդ շրջանակի մեջ չեն ընդգրկվում:

Հարց-Ջուլյա Սահակյան

-Ես մի հարց ունեմ. իմ հարցը վերաբերվում է այս սխեմային, որ պատկերել եք: Կա՞ արդյոք մի իդեալական միջավայր , որում սխեման աշխատում է, և կա՞ միջավայր, որում չի աշխատում: Այսինքն, մենք տեսնում ենք իրենց մեջ փոխկապակցվածություն (թե ինչպես է աշխատում), բայց ի՞նչ միջավայրում պետք է դնել, որպեսզի դա աշխատի:

Գևորգ Տեր-Գաբրիելյան

-Շատ կարևոր հարց է, Ջուլյա ջան, շնորհակալություն: Որպես այդպիսի միջավայրի օրինակ ես կարող եմ բերել նաև մեր կազմակերպությունը, որում սա քիչ թե շատ աշխատում է: Բայց մի կարևոր բացթողումով, որը հենց հիմա մեզ տանում է դեպի գրատախտակի ա՛յս մասը, որտեղ ես շարունակելու եմ նկարել: Ի՞նչն է խնդիրը.աշխարհի համակարգերը հիերարխիկ են, այսինքն՝ յուրաքանչյուր այսպիսի մթնոլորտին, այսպիսի համակարգին, այսպիսի ֆունկցիոնալ բաժանմանը համապատասխանում է նաև կառուցվածքային բաժանումը:Եթե մենք վերցնում ենք մեր կազմակերպությունը, այստեղ սա քիչ թե շատ գործում է, բայց կառուցվածքայնորեն մեր կազմակերպությունը մնում է հիերարխիկ. պազապես, մենք այդ հիերարխիան պատկերում ենք այսպես՝ այստեղ տնօրենն է, և այստեղ,ևս,մի շրջանակն է՝ տնօրենների խորհուրդը, այսինքն՝ հագաբարձուների խորհուրդը: Իսկ ես ներքև եմ պատկերում, որովհետև խոսքը պատասխանատվության մասին է(սա չինական տարբերակով է), այսինքն՝ կառուցվածքայնորեն, կան մարդիկ, որոնք ավելի պատասխանատու են, քան մյուսները, բայց ֆունկցիոնալ առումով մենք աշխատում ենք ստեղծել այսպիսի համակարգ:

Իհարկե, ես արդեն ասացի, որ սա իդեալական է: Իդեալականի դեպքում այս կառուցվածքային մասը չկա, սա կարող է հանկարծ մի պահ արտահայտվել (և երբեմն արտահայտվում է), ասենք, ոչ հիերարխիկ կազմակերպչական կառույցներում, օրինակ՝ շարժումների մեջ և այլն: Երբ հավաքվում որոշում են՝ դու սա կանես, դու սա կանես, գնում

անում են, և եթե մեկն ասաց՝ գիտեք, ինձ պետք է օգնել այս ինչ բանը կազմակերպելու [հարցում], բոլորը կազմակերպվում նրան են օգնում: Այսինքն՝ այդ պահին առաջնորդի դերը ստանձնեց, հետո մյուսն է գալիս և այլն: Բայց դա հեղհեղուկ տարբերակ է, որը ժամանակավոր կարող է աշխատել. երկար ժամանակ չի կարող աշխատել, որովհետև բոլոր ինստիտուցիոնալ կառուցվածքները ունեն հիերարխիկ կոմպոնենտ:



Նկար 1

Հիմա անցնենք սրան, որովհետև ընդհանուր առմամբ, սա, իհարկե, որպես իդեալ շատ հեռու է իրականությունից: Մեր իրականությունը,հատկապես քաղաքական (բայց ոչ միայն) համակարգերում հնուց շատ ավելի նման է եղել սրան՝ բուրգին (տե՛ս նկար.1):

Սրա գագաթում գտնվում է ալֆա որձը, որը ռոմակի ղեկավարն է և նրանք բոլորը դասավորված են որոշակի հիերարխիաներով և ենթարկվում են սրան: Ի՞նչ առանձնահատկություններ ունի այս համակարգը և ինչու՞ հիմա մենք ունենք դեպքեր, երբ այս համակարգը չի գործում: Փոխարենը գործում են համակարգեր ինչպես պիտի գործի այստեղ գտնվողը: Նախ, հին ժամանակներից եթե վերցնելու լինենք, ինչպես գայլերի ռոմակում, այստեղ, գտնվողը [ալֆա որձը] պետք է լիներ ֆիզիկապես ամենաուժեղը, մնացած բոլորին ֆիզիկապես հաղթող կամ սպառնալի (որ կհաղթի, եթե մրցեն, ինչպես Ակելան գայլերի ռոմակում): Հենց որ նա ծերանում է և ինչ-որ թուլություն է իրեն թույլ տալիս, իսկույն նրա առաջնորդությունն է հարցականի տակ դրվում: Երկրորդը, եթե նա հաջողակ է, նա ի՞նչ է անում՝ ռեսուրսը այստեղից հավաքում է իրեն: Ինչո՞վ է նա զբաղված՝ ռեսուրսը հավաքում, իր մոտ է կուտակում, հետո դրա մի մասը՝ մի փոքրիկ մասը, վերադարձնում է, որ սրանք սովից չմեռնեն — այդ գործով է զբաղված: Եթե նա հաջողակ է, եթե երկար ժամանակ այս համակարգի վրա հարձակում դրսից չի լինում և այլն, եթե չեն ապստամբում, ռեսուրսը սկսում է կուտակվել: Երբ ռեսուրսը կուտակվում է, կուտակվում է ամենաշատն, իհարկե, այստեղ, բայց մի քիչ էլ ներքևներն էլ է գնում, և այստեղ առաջանում են ովքե՞ր՝ մրցակիցները:

Այսինքն, նրա ներքևում գտնվող, քիչ ավելի ստորին խավում գտնվող նրանք, որոնց վրա նա հենց հենվում է, որպեսզի կազմակերպի իր շահագործողական ապարատը, դառնում են բավականին ուժեղ, և նա ունի երկու ելք՝կա՛մ նա թողնում է ամեն ինչ, ինչպես որ կա (և այդ դեպքում սրանք, գնալով ուժեղանալով,(իրենք ավելի շատ են, քան ինքը) ի վերջո իրեն գահընկեց են անելու, մինչև մեկ ուրիշը չդառնա ալֆա որձը), կա՛մ ի՞նչ է սկսում անել՝ սկսում



է կիսել իշխը, կիսել իշխանությունը: Կան նույնիսկ այլ դեպքեր, բայց այստեղ, հանկարծ, բավականին ռեսուրսակիր մեկը հայտնվում է և նրան հրավիրում են ներս՝ ուժեղների, վախենալիների, վտանգավորների իշխական համակարգ, այսինքն՝ կոոպտացիա է տեղի ունենում: , Արդյունքում, ալֆառրձային այս համակարգն անցնում է դեպի սա՝ որպես առաջին ստադիա, համարենք՝ դեպի մասնակցայնության երկրորդ ստադիան կամ ժողովդրավարության երկրորդ ստադիան՝ խունտայական համակարգի կամ կլոր սեղանի համակարգի, երբ կա գլխավորը՝ ալֆա որձը, բայց նա արդեն իշխը կիսել է մի խմբի հետ, և ահա, այս խումբն է արդեն բուրգը իշխում, տնօրինում (տե՛ս նկար 2):

Սա Մայքլ Մանի արգումենտն է, որի մասին ես գրել եմ դեռ 1998 թվականին: Բավական հայտնի քաղաքագիտական արգումենտ է, թե ինչպես է ժողովրդավարությունը զարգանում:



Արգումենտի հիմքն այն է, որ ժողովրդավարությունը ստիպված վայրէջք է, և որ այն ռացիոնալ հաշվարկի վրա է հիմնված, որովհետև եթե դու երկար ժամանակ չես գնում դեպի իշխանականների խմբի ընդլայնում, ի՞նչ է տեղի ունենում՝ կա՛մ այստեղ դժգոհությունը կուտակվում է և քեզ գցելու են, իսկ ամբողջ հասարակությունը գլորվելու է ներքև (որովհետև քաղաքացիական պատերազմ կսկսվի և այլն), կա՛մ դրսից հարձակվելու են և էլի հասարակությունը մեծ տանջանքների է ենթարկելու: Իսկ դա ինչու՞ է վատ: Ոչ թե որովհետև նա շատ սիրում է մարդկանց և չի ուզում, որ նրանք ենթարկվեն տանջանքերի: Ո՛չ: Այլ որովհետև քսակը փոքրանալու է, ռեսուրսը փոքրանալու է: Ամեն դեպքում, եթե դու խաղաղ ճանապարհով չես սկսում ներգրավել, կոոպտացնել վտանգավորներին կլոր սեղանի շուրջ, դու այլ կերպ ես զրկվելու այդ ռեսուրսից: Ավելի լավ է բաշխես և տևական ժամանակով (սա ժամանակի գործոնի հետ է

կապված) շարունակես կուտակել, որպեսի բուրգդ մեծանա, պնդանա և դադարի այսպիսի սրածայր բուրգ լինել: Այլ կերպ ասած՝ դու այն ռեսուրսը, որը կարող էիր թալանով արագ կուտակել, բայց երկարատև չկարողանայիր պահել, փոխարինում ես նտակյաց կերպով տևական ռեսուրսի կուտակմամբ:

Արդեն մտածում ես քո զավակների ու թոռների մասին, ասում ես՝ ավելի լավ է նրանք ստանան տարեկան հազար դոլար հարյուր տարի երկարությամբ, քան տասը հազար դոլարը մի տարի ստանան, իսկ հետո ամեն ինչից զրկվեն: Այսպես է սկսում զարգանալ մասնակցայնությունը, և հաջորդ փուլը, բնականաբար, արդեն հասկանում եք, ժողովրդակավարական ընտրություններն են, երբ մասնակիորեն որոշակի ժամկետներով, բայց ամբողջ հասարակությունը կամ նրա ընտրական իրավունք ստացած մի մասը , (դա էլ միանգամից չի եղել, չէ, կամաց-կամաց է ստացել) մասնակցում է իշխի ձևավորմանը (տե՛ս նկար 3): Սա շատ հետաքրքիր է, որովհետև սա, նույնպես, ընդամենը մի ստադիա է: Որովհետև, ինչպես մենք տեսնում ենք, շատուշատ ժողովրդավարություններից, ընտրական համակարգերից (ինչպես և մեր) երբ մարդիկ գալիս են իշխի, չորս կամ հինգ տարով, ասում են՝ դուք մեզ ընտրել եք, (նույնիսկ եթե ընտրություններն արդար լինեն) հիմա ինչ ուզենք՝ կանենք: Այսինքն՝ մասնակցայնությունը պարբերական բնույթ է կրում, բայց ոչ անընդհատ, ոչ անընդմեջ. մի պահ այստեղ մասնակցային է, չորս տարի է, այստեղ մասնակցային է, չորս տարի է, այստեղ մասնակցային է, չորս տարի է և այլն:

Նկար 3

Հիմա, հաջորդ հարցը այս ընթացքում մասնակցայնության ապահովման մասին: Եվ այստեղ, իհարկե, վերադառնում ենք այս տարբերակին: Իհարկե, կա իշխի փոխելիության հնարավորությունը չորս տարին մեկ, բայց մենք գիտենք՝ ինչքան դժվար է դա, որովհետև նույնիսկ եթե այլ կերպ չեն վարվում, այնուամենայնիվ, ադմինիստրատիվ ռեսուրսը միշտ ներկա իշխին մեծ հնարավորություններ է տալիս: Եվ այդ առումով, օրինակ, բավական հետաքրքիր և զարմանալի է լավ աշխատող ժողովդրավարությունը դիտելը: Որովհետև Դոնալդ Թրամփի չվերընտրվելը գոնե երկրորդ ժամկետում, ըստ ամերիկյան կարգերի (ավել չէր էլ կարողնալու), արդեն ցույց է տալիս շատ լավ աշխատող ժողովրդավարություն: Իսկ Պուտինի տասնյակ տարիներ ընտրվելը, և ամեն ինչ փոխելը, որպեսզի նորից ու նորից ընտրվի, ցույց է տալիս մեկ այլ իրադրություն՝ շատ տիպական մի շարք ավտորիտարիզմներին՝ լեգիստական ավտորիտարիզմ: Այսինքն՝ մի համակարգ, որտեղ օրենքով, իբր թե, ֆասադայնորեն, ստեղծվում է ընտրական իշխ, կիսվող իշխ, սակայն այն իրականում բավականին այսպիսին է, և քանի գնա, ավելի այսպիսին է դառնում:

Հարց- Ջուլյա Սահակյան

-Ես մի քանի հարց ունեմ, բայց, երևի, ավելի շատ վերջին թեմայի հետ կապված: Դուք նշեցիք, որ ընտրությունների ժամանակ մարդիկ մասնակցում են, այսինքն, այսպես ասած, ներկայացուցչական ժողովրդավարություն է: Բայց հիմա ժամանակակից աշխարհը կարիք ունի հավելյալ մասնակացության, այսինքն՝ ընտրություններից ընտրություն այդ

ժամանակահատվածում: Ինչի՞ համար է այդ կարիքն առաջացել, միգուցե պետական կառավարման համակարգերն ավելի արդյունավետ կառավարելու կարի՞ք ունեն (և ներգրավում են հանրությանը), թե՞ դա ժողովրդավարության ամրացման միջոց է: Ինչպե՞ս առաջացավ այդ միջանկյալ կարիքը ։

Գևորգ Տեր-Գաբրիելյան

- Այդ կարիքը միշտ էլ կար. մարդիկ պարզապես այս իրադրության մեջ շատ ճնշված էին, ազատազրկված, կեղեքված, կամաց-կամաց նրանք ազատագրվում են և, ի վերջո, նրանց երազանքն է լինել ինքնիշխան ամեն մեկի նկատմամբ: Ինքնիշխան ի՞նչ է նշանակում. որ դու ինչ ուզենաս, կարողանաս իրագործել, ասենք, սա քո փոքրիկ պետությունն է, քո ընտանիքը, չգիտեմ, իսկ ավելի մեծ շրջանակը՝ մեծ պետական համակարգը կամ միջպետական համակարգը, այնպես է աշխատում, որ դու կարիք էլ չունես շատ անդրադառնալու, նրանք քեզ չեն էլ խանգարում:

Այսինքն, մարդը ձգտում է, մարդկությունը ձգտում է ազատության՝ որքան կարելի է ավելի շատ շերտեր սեփականացնել, ունենալ, կարողանալ, օգտագործել: Այդ է պատճառը: Բայց մենք սկսել ենք ա՛յս վիճակից, մարդկությունը սկսել է շատ տխուր վիճակից: Իհարկե, սա տեսական պատկեր է. միշտ եղել է խորհրդակցություն և այլն, բայց (երբեմն շատ ուժեղ համապատասխանում է իրականությանը), ավաղ, սկսել է այս վիճակից: Հիմա շատ դեպքերում գտնվում է այս վիճակում, բայց խնդիրը մնում են հենց այս արանքները՝ ինչպե՞ս մասնակցել և (եթե դու առաջնորդն ես, որն այժմ արդեն կարող է պատկերվել ինչպես և այն նկարում էր՝ այսպես) ինչպե՞ս ստեղծել պայմաններ մասնկացության համար և ի՞նչ գործոններ են այստեղ աշխատում: Ճիշտ ինչպես ա՛յս մասնկացայնության ընդլայնման մեջ ռացիոնալը դեր խաղաց (եկեք տնականորեն ստանանք քիչ ռեսուրս, քան թե կարճ ժամկետում շատ, իսկ հետո ոչինչ), այստեղ էլ, նույնպես: Այլ կերպ ասած՝ եկեք տնականորեն ստանանք քիչ ռեսուրս և կուտակենք: Դա է ռացիոնալը:

Այսինքն, դու կարող ես այս ժամանակշրջանում շատ ռեսուրս կուտակել, իսկ հետո ամեն ինչ կորցնել, կամ մտածում ես՝ ինչպես անել, որ մասնակցայնությունն այս ժամանակաշրջանում նույնպես իրագործվի: Ինչպես այստեղ ասացի, պիտի լինեն ծրագրեր, նպատակներ ես դնում, դրանք քննարկում ես, դրանց իրագործելիությունը ստուգում ես, հետո սկսում ես դրանք իրագործել: Եվ դրանք իրագործելու ժամանակ պիտի օգտագործես սահող գենելարի սկզբունքը, այսինքն՝ մե՛կ այս օղակն է դառնում գլխավորը, մե՛կ այն օղակն է դառնում գլխավորը, մե՛կ երրորդը: Այստեղ շատ կարևոր է վստահության գործոնը:

Եթե այստեղ ժողովուրդը լուռ է, պատճառը կարող է լինել վստահությունը: Իսկ ե՞րբ է ժողովուրդը դադարում վստահել՝ երբ վոլյունտարիստական որոշումներ է տեսնում, որոնք ոչ մի ծրագրի մեջ նախապես չէին արձանագրվել, երբ խոշոր անարդարություններ է տեսնում, երբ ուզում է ազդել և չի կարողանում: Այս դեպքերում վստահությունը փլվում է և ստեղծվում այլ՝ նույնիսկ ժամանակավոր իրադրություն: Որովհետև ընտրություններ կան կոնֆլիկտ

ընտրողների և իշխանական համակարգի և ղեկավարների միջև: Այսինքն, ի վերջո, քանի դեռ ամեն ինչ լավ է, կարող ես ավելի քիչ մասնակցայնություն թույլ տալ քեզ և՛ ներքևից, և՛ վերևից, կարող ես ավելի քիչ թափանցիկություն թույլ տալ քեզ և՛ ներքևից, և՛ վերևից: Բայց էլի, այս վստահության գործոնը շատ ուժեղ կապված է ռացիոնալ մտածողության հետ: Ինչո՞վ է պայմանավորվում վստահությունը. իհարկե այն պայմանավորվում է կրթությամբ, այսինքն՝ «պարտադիր կրթական ցենզ» հասկացությունը շատ կարևոր է, և՛ իշխողները, և՛ մասնակիցները ունենան բավարար կրթական ցենզ: Բայց սա հերիք չէ. բարոյական արժեքները, ըստ որոշակի ուսմունքնի, ո՛չ բնածին են, ո՛չ ընտանիքով են պայմանավորվում: Դրանք պայմանավորվում են շահով: Մարդը ռացիոնալ էակ է, որը ուզում է ազատության իր մակարդակները ընդլայնել, և եթե նա տեսավ որ իրեն ավելի շահավետ է գործել ազնիվ, քան անազնիվ, մեծ հավանականությամբ նա կընտրի ազնիվ գործելու տարբերակը: Այսինքն, այս համակարգը մասնակցային է, չի փլվում այնքան ժամանակ, քանի դեռ իր յուրաքանչյուր անդամին ավելի շահավետ է լինել ազնիվ (և համաձայնել համակարգի գործունեությանը), քան դրա դեմ դուրս գալը: Կամ դրա տակը սկսել փորել, քայքայել, կոռումպացնել, և այլն:

Դա է հիմնական միջոցը, այսինքն, դա շատ հետաքրքիր է, որովհետև վերջերս Վարդան Ջալոյանի հոդվածում հանդիպեցի ֆրանսիական մի փիլիսոփայի, ով ասել ասել է, որ եթե վերը գտնվող մարդն է գողանում (կոռումպացված), իհարկե, անարդարություն է, իսկ եթե ստորոտում գտնվող մարդն է դա անում, դա հաճախ դիմադրություն է: Այսինքն, նա այլ ճար չունի, ինչպես սովածն է հաց գողանում (նա այլ պարզապես ճար չունի): Ուրեմն, վստահությունը հիմնված է ռացիոնալ փոխհարաբերության վրա: Եթե չկա ռացիոնալ փոխահարաբերություն, անպայման սկսվելու է կոռուպցիան, և, ուրեմն, անպայման մասնակցայնությունը տուժելու է: Սա փոխհամաձայնության համակարգ պիտի լինի, բայց ես կարճ նշեմ նաև մյուս մակարդակները. ի վերջո, ինչպե՞ս են այս հարցերը քննարկվում: Ինչպես գիտենք, մենք նշեցինք բուրգային առաջնորդական համակարգը, այսպես ասած՝ արխայիկ, նշեցինք այն, ինչ ես անվանում եմ խունտա (բայց կարելի է նաև անվանել կլոր սեղան), որովհետև այս անդամներից յուրաքանչյուրն ունի իր բուրգը, նշեցինք ուղղակի ընտրությամբ ժողովրդավարությունը, և կան ժողովրդավարության հաջորդ դեպքերը՝ պլեբիսցիտը (երբ բոլորը հաճախ մասնակցում են շատ հարցերի քննարկմանը, և մենք գիտենք, որ դա, ասենք, Շվեյցարիայի կամ Իսլանդիայի շատ զարգացած մոդելներից է. երբ ոչ թե չորս տարին մեկ, այլ բազում անգամներ իշխողների մոտ



Նկար 4

ճիշտ վարվելու մասին կասկած առաջանալի դեպքում դիմում են ժողովրդի օգնությանը) (տե՛ս նկար 4) և այլ՝ ավելի ու ավելի բարդացող մոդելներ: Ամենահետաքրքիրն այն է, որ ժողովրդավարությունը միավորում է մի շարք մոդելներ միաժամանակ իր մեջ, տարբեր մակարդակներում տարբեր մոդելներ են աշխատում կամ միաժամանակ աշխատում են մի շարք մոդելներ: Եվ հենց, ասենք, ուժերի բաժանումը, իշխանության բաժանումը (օրենսդիր, գործադիր և դատական) դրանով է պայմանավորված: Եվ հիերարխիկ կազմակերպություններ ունենալը վերսուս շատ մասնակցային կազմակերպություններ ունենալու, տարբեր տիպի կազմակերպությունները միաժամանակ աշխատելը, կազմակերպվածություններն իրենց օրենքներով, իրենց կանոններով, մեկը՝ շատ մասնակցային, մեկը՝ քիչ մասնակցային, մեկը՝ լրիվ թափանցիկ, մյուսն՝ ավելի շատ խորհրդապահական և այլն), բարդությունը դա է. որ նկարագրում է ժողովրդավարական համակարգը: Սա ամենապարզ արխայիկ համակարգն է՝ որքան գնում ենք դեպի խորք՝ դեպի ավելի զարգացած հասարակությունները, այնքան նրանք ավելի բարդ են: Եվ ուրեմն, կենտրոնանանք «վստահություն» հասկացության և այն հանգամանքի վրա, որ վստահությունը ռացիոնալ մոտեցմամբ է պայմանավորվում ո՛չ մարդու ներքին առաքինություններով (որ նա կարող է ունենալ, կարող է չունենալ):

Վստահությունը կայանում է նրանում, որ դու գիտես, որ այսպիսի համակարգերում դու ավելի ապահով ես, դու շատ բան ես վճարում, բայց նաև ստանում ես ապահովություն, տնական անվտանգություն և քո պլաններն իրագործելու հնարավորություն: Դու կարող ես մասնակցայնություն ցուցաբերել երբ ուզում ես, իսկ երբ ուզում ես՝ վստահել (քո դատելուց է կախված): Դու՛ ես որոշում և, այդ առումով, կրթական ցենզը շատ կարևոր է. կարևոր է, որովհետև դու գիտե՛ս՝ ինչ կրթական ցենզ ունի տվյալ պահին իշխանավորը՝ քո ղեկավարը: Եվ նա գիտի՝ դու ինչ կրթական ցենզ ունես:

Ուրեմն, եթե դու նրան վստահեցիր, մի բան գիտես, եթե սխալվեցիր, պետք է հետ խաղարկել. առաջանում են խնդիրներ, կոնֆլիկտ է առաջանում, պետք է հիմա տեսնել՝ ոնց ենք լուծում. արդյոք սպասելով մինչև ընտրությունն՝ը, թե՞ կան կոնֆլիկտի լուծման այլ միջոցներ, այլ տարբերակներ: Եվ ցածր վստահության հանգամանքը միշտ գոյություն ունի. ռացիոնալ է մի շարք հասարակություններում, օրինակ, արևմտյան հասարակություններում կոռումպացված չլինելը, ավելի մեծ օգուտ ու շահ ես ստանում, քան հակառակ դեպքում երկարատև ընթացքով: Իսկ շատ այլ հասարակություններում, ընդհակառակը, ռացիոնալ է խաբելը, խորամանկելը, տակից դուրս գալը և այլն: Այդ առումով թափանցիկությունը, նույնիսկ այդ արևմտյան հասարակություններում, նույնիսկ այդ ռացիոնալը քիչ թե շատ կարևոր դեր է կատարում: Այսինքն՝ այն թույլ է տալիս, որ երևա՝ ինչպես է որոշումն ընդունվում: Որովհետև անվստահությունը, կասկածը ե՞րբ է առաջանում՝ երբ, ինչպես ասացի, այդ առաջնորդի՝ ալֆա որձի կողմից ընդունված որոշումները թվում են վոլյունտարիստական, այսինքն՝ նախօրոք չպայմանավորված, ծրագրի նպատակներին չհամապատասխանող, ինչ-որ մի այլ ուղղությամբ տանող: Ասվել էր, որ, ասենք, բիզնեսն ազատ կլինի, մինչդեռ տեսնում ես, որ, ընդհակառակը, պահանջում են kickback-եր, ատկատներ և այլն և այլն:

Այլ կերպ ասած՝ հենց տեսնում ես, որ որոշումները չեն համապատասխանում նախօրոք ստեղված ծրագրին, այդ պահին իրագործվող ծրագրին, վստահությունը փոքրանում: Դրա համար ասում են՝ եկեք թափանցիկ լինենք, բայց էլի չմոռանանք, որ ավելի լավ է ունենալ բարձր վստահության հասարակություն, որտեղ խորհրդապահությունը նույնպես դեր է կատարում, քան թե ունենալ ցածր վստահության հասարակություն, որտեղ կոռուպցիայից (և ուրեմն, վատ կառավարումից) խուսափելու միակ ձևը հարյուր տոկոսանոց թափանցիկությունն է: Որովհետև հարյուր տոկոսանոց թափանցիկությունը (կամ դրան մոտ, իհարկե) հարյուր տոկոսանոց չի լինում, մարդուն զսպաշապիկի պես թույլ չի տալիս գաղափարներ ստեղծել և իրագործել:

Քեզ պետք է որոշակի ազատություն ոչ հանրային տիրույթում, նույնպես, որ դու կարողանաս լավ գաղափարներն իրագործել: Պետք է, որ քեզ վստահեն ինչ-որ ժամանակ. ամեն ինչ չէ, որ բառերով ասվում է, ամեն ինչ չէ, որ կարող է թափանցիկ լինել: Ուրեմն, թափանցիկությունը շատ կարևոր արժեք է, բայց լավ կլինի նաև privacy-ի հետ կապված թափանցիկություն լինի: Եթե դու ունես անձնական կյանք, չես ուզում, որ ամեն ինչ լինի թափանցիկ. լավ կլինի, որ հասարակության մեջ վստահություն լինի չչարաշահված, որ այդ թափանցիկությունը ռացիոնալ լինի, ոչ թե բոլորի կողմից անընդհատ ուզվող: Որովհետև երբ այն բոլորի կողմից անընդհատ ուզվում է, արդյունքը ի՞նչ է լինում՝ դեգեներացվում է այս համակարգը (ինչպես արդեն ասացի, Ռուսաստանի դեպքում լեգիստական ավտոկրատիա է ստեղծվում, երբ օրենքն արդեն ձև է միայն դառնում, և, օրինակ, Հայաստանի դեպքում, երբ պոպուլիստական ավտոկրատիա է դառնում (դու բոլորին ասելով ես թափանցիկ եմ, թափանցիկ եմ, մինչդեռ զուտ խաբում ես բոլորին)):

Հարց- Ջուլյա Սահակյան

-Հերթական հարցերից մեկը՝ արդյո՞ք կա ուղիղ կապ լավ կառավարման հիմնական սկզբունքների՝ թափանցիկության, հաշվետվողականության և մասնակցության միջև, արդյո՞ք կա անմիջական կապ այդ սկզբունքների միջև, արդյո՞ք հնարավոր է ունենալ մասնակցություն՝ չլինելով թափանցիկ և հաշվետու, կամ հակառակը՝ արդյո՞ք հնարավոր է լինել թափանցիկ և հաշվետու, բայց սահմանափակել մարդու մասնակցությունը: Բայց այստեղ ձեր ասածից ես ենթադրեցի, որ այդ կապը որոշակիորեն միջնորդավորված է վստահության միջոցով, այսինքն՝ իրենց՝ միասին աշխատելը նվազեցնում կամ բարձրացնում է վստահությունը և, հետևաբար, նաև մասնակցությունն է դրանից ավելանում:

Գևորգ Տեր-Գաբրիելյան

-Այո, բայց սկզբունքորեն հնարավոր է: Օրինակ, ինչպես վստահություն գրավել. դու գալիս ես մի տարածք, որը տառապում է վստահության շատ ցածր մակարդակից, որովհետև նախորդ ղեկավարը՝ առաջնորդը, քայքայել է վստահությունը: Ի՞նչ պիտի անես դու՝ առանց սպասելու, որ մարդիկ ուզեն, նրանց մասնակցայնություն տրամադրես թափանցիկության միջոցով: Այսինքն՝ ի՞նչ է թափանցիկությունը. դա մարդուն (ուզում է նա, թե ոչ) տրամադրել է

նշանակում, տեղեկություն կամ քո գործողությունների ընթացքը ցույց տալը, որ նպատակի համար ես այս-այս գործողություններն անում: Հիմա դու գնացիր այստեղից այստեղը, այստեղից այստեղը, այստեղից այստեղը, այստեղից այստեղը: Եթե նպատակն իրագործվեց, և դու ոչ ցածր վստահության տարածքում էիր, շատ լավ, բայց եթե չէ, դու ցույց ես տալիս, որ այստեղից այստեղ, ես դրա համար գնացի ժողովուրդ ջան, ցույց ես տալիս՝ ինչպես ես գնում: Հիմա այդ պոպուլիստականը, որ ասում եմ, սա, երբ սա նպատակ ու ծրագիր չկա, դու ցույց ես տալիս իբր թե ինչ-որ բաներ, բայց իրականում քո նպատակն ու ծրագիրը լրիվ ուրիշ են, քան այն, ինչը որ պայմանավորվել եք: Իսկ լեգիստականը սա է, երբ դու ցույց ես տալիս այլ քայլեր, իբր թե՝ տեսեք ամեն ինչ ճիշտ ենք անում, բայց իրականում անում ես այլ քայլեր և այլն: Ու այս համակարգերի տարբեր խեղումներ կան, խեղաթյուրումներ կան: Ուրեմն, դու թափանցիկությունը կարող ես որպես առաջնորդ տրամադրել, որքան կարելի է շատ:

Էլի խորհրդապահությունը հարց է, բայց ընդհանուր առմամբ ընդհանրապես, ինչպես գիտենք, ոչ միայն լավ որոշումները այլ, նախևառաջ, մեզ համար անշահավետ որոշումները խմորվում են մութ տարածքներում: Այսինքն, այն բոլոր տարածքները, որոնք մեզ հասանելի չեն, այնտեղ կան: Խնդիր կա՝ կոռուպցիայի խնդիր. հենց դրա համար բանտերը, բանակը, փակ տարածքները, որտեղ սովորական քաղաքացին ավելի քիչ մուտք ունի, քան այլ տեղեր, այնտեղ կոռուպցիայի շանսը շատ ավելի մեծ է: Որովհետև չգիտես՝ ինչ է կատարվում, կարող է անեն հետո իմանաս: Եվ մենք տեսնում ենք դա նաև մեր հասարակությունում. շատ ուժեղ փակ սենյակները, երբ որոշումներ են կայացնում, տնականորեն անհասանելի շատ մեծ վստահության խնդիրներ են առաջացնում: Անընդհատ հարց է առաջանում՝ իսկ ինչո՞վ են նրանք այնտեղ զբաղված, և այլն: Եվ, էլի եմ ասում, այստեղ շատ ճիշտ է վստահության վրա հենվելով ճիշտ համամասնությունը գտնել և՛ խորհրդապահության ու թափանցիկության, և՛,պարզապես, թափանցիկության և ոչ թափանցիկության՝ ոչ պարտադիր խորհրդապահության այն բոլոր հարցերի, որը դու չես քննարկում բոլորի հետ:

Կա այսպիսի հասկացություն՝ *Need to know* (կարիք կա, որ ես իմանամ), իսկ կարիք կա, որ ես չիմանամ, այսինքն՝ շատ հաճախ լինում է, որ եթե դու վստահում ես իրադրությանը, քեզ գալիս են ասում են՝ գիտես ինչ, մենք սենց-սենց բան ենք անելու, ասում ես՝ եղբայր, ոնց ուզում ես, արա, կարիք չկա, որ ես դրա մեջ շատ խորանամ: Ամեն ինչի մեջ հնարավոր չի խորանալ, այդ բալանսը պիտի պահպանվի: Բայց այստեղ կա մի շատ կարևոր հարց, հանգամանք, որը վերաբերում է մեր տեղական ինքնակառավարման համակարգին:

Մենք հիմնականում խոսում ենք մեծ համակարգի վերաբերյալ մոդելներից, բայց ամբողջը սկսվում է փոքր համակարգից: Եվ երբ ես այս փոխկապակցված շրջանակները պատկերեցի, մենք կարող ենք սա պատկերացնել որպես մեծ համակարգ, և սա՝ որպես փոքր համակարգ, այսինքն՝ փոքրը, իրոք, չափսով է փոքր՝ տեղական ինքնակառավարման մարմինը, քան պետական իշխանական համակարգը: Բայց իր նշանակությամբ ինքը նույնիսկ ավելի մեծ է, որովհետև մասնակցայնությունը իշխանավորման հետ է կապված, իսկ իշխանավորումը, զորավորումը, երբ մարդը զգում է, որ ինքը պատասխանատու է ինչ-որ բանի համար, երբ

մարդը զգում է, որ իրեն հարցրել են, և ինքը կարող է մասնակցել ինքն էլ անել, մասնակցել իրագործմանը դրա։

Այս ազատության մակարդակներից կարևորագույններից մեկն է, և դա սկսվում է քո տան միջից և, հետո, տան շեմից, քո բակից, թաղից, փողոցից, կողքից, քո կողքի այգուց։ Ես հաճախ եմ ասում, որ մեր մոտ հակառակ տարբերակն է՝ ՏԻՄ-ը վերև է տալիս, ինչ ունի-չունի, հետո այնտեղից որոշում են՝ ինչքան իջեցնել իրեն։

Մինչդեռ իդեալական համակարգը այսպիսի համակարգը կլիներ՝ հակառակը՝ ՏԻՄ-ը կլոր սեղանի անդամ է, ՏԻՄ-երի խորհուրդն է կառավարում պետությունը ինչպես, ասենք, Շվեյցարիայում՝ կանտոնները։ ՏԻՄ-երը գալիս են միասին և այստեղ, տեսեք, կա անդամ, որը ՏԻՄ-ի ղեկավարն է, ավագանին է, և կան բնակիչներ, բայց իրենց դերակատարությունը այս օղակի մեջ պիտի լինի նույնքան, որքան ավագանունը, այսինքն՝ ավագանին պիտի լինի թափանցիկ, բնակիչների կարիքի թարգմանիչը դեպի ՏԻՄ։ Բայց այստեղ ի՞նչ հարց է առաջանում. եթե կրթական ցենզը չի ապահովված, ավաղ, ժողովուրդը, կոպիտ ասած, հասարակ ժողովուրդը, հաճախ սխալ բան է ուզում, և դա օգտագործելով՝ ղեկավարները ասում են՝ ավելի լավ է նրանց հետ չքննարկել։

Այսինքն, ղեկավարները պիտի այդ իմաստով հսկայական կարողություն ունենան ճիշտ բացատրելու՝ ինչի մասին է խոսքը, որովհետև հաստատ դա չափազանցություն է, որ իրենք բոլորը միշտ ամեն ինչ սխալ են ուզում։ Երբեմն կարող է պատահել, բայց հիմնականում շերտավորված է, չէ՞, դու պիտի գտնես համախոհներ, որոնց հետ միասին այս գործն անես։ Եվ այստեղ էլի ինչն է կարևոր. որ այսպիսի համակցությունից, համադրությունից կարող է առաջանալ ամուր կառավարման համակարգը, ամուր հիմնված իրական մասնակցայնության վրա, որովհետև եթե դու չորս տարին, հինգ տարին մեկ գնում ես քվեարկելու (նույնիսկ եթե ընտրակաշառք չեն բաժանում և քեզ թույլ են տալիս ազատորեն քվեարկել, բայց քո տան դիմացի պուրակն ավերում են, ծառերը կտրում են և փոխարենը ինչ-որ մի օլիգարխ կրպակ է դնում) դու լրիվ ապահշխանավորված ես։ Այսինքն, սա դարձել է լրիվ ձևական, լեգիստական տարբերակ, դու պիտի կարողանաս քո անմիջական շրջապատում որոշում ընդունելու և իրագործելու հնարավորություն ունենալ, որպեսզի մենք ասենք, որ իրական մասնակցայնությունը տեղի է ունենում։

Հարց- Ջուլյա Սահակյան

-Այստեղ կարելի է շեշտել նաև կրթության, վստահության հետ նաև հաղորդակցության կարևորությունը։ Այսինքն՝ այստեղ կարևորը, որպեսզի հաղորդակցությունը նույն ավագանու ՏԻՄ-երի և բնակիչների միջև ձևավորված լինի և սիստեմատիկ լինի, այսինքն ոչ թե կտրտված, ժամանակ առ ժամանակ ըստ կարիքի, այլ սիստեմատիկ աշխատող մեխանիզմ լինի։

Գևորգ Տեր-Գաբրիելյան

-Շատ շնորհակալություն, բնականաբար, թափանցիկությունն անմիջականորեն հաղորդակցությանն է վերաբերվում: Ի՞նչ ձևի հաղորդակցության մասին ենք խոսում՝ այն հաղորդակցության, որն այստեղ ձևակերպված է, այսպես կոչված, կոպերատիվ հաղորդակցության, կոպերատիվ կոմունիկացիայի, այսինքն՝ երբ դու մանիպուլյացիայի չես ենթարկում ինչ-որ հաղորդագրություն արձակելով (գիրքը տեսաք): Համենայն դեպս, նորից ցույց տամ «Քննադատական մտածողության մասին»-ը: Սրա առաջաբանում հաղորդակցության այդ սխեման դրված է, այսինքն՝ դու ունես հաղորդակցվելու հնարավորություն և այն առանց խոշոր խոչընդոտների է տեղի ունենում: Քեզ ինչ-որ բան ասելիս չեն մանիպուլացնում, ասում են հենց այն, ինչ նկատի ունեն, և դուք ունեք վստահության հարաբերություն, իսկ դու հասկանում ես այնքան, ինչքան նկատի ունեն: Եվ դա բավականին դժվար բան է, որովհետև նույնիսկ մեր սովորական խոսակցության մեջ ինչպես հիմա երբ ես եմ խոսում, հաճախ կարող է ինչ-որ մեկը սխալ բառ օգատգործել, սպրդի ինչ-որ սխալ հասկացություն, և ի՞նչ պիտի արվի այդ դեպքում, եթե վստահում են այդ խոսողին՝ հասկանում են ինչ նկատի ուներ նա:

Օրինակ՝ մեկը կարող է «երեք տարի հետոյի» փոխարեն ասել երեք տարի առաջ, բայց դու կճշտես: Եթե վստահում ես այդ հաղորդակցությանը քո մտքում, ուրեմն, սա պիտի վստահի, որ սա չի աղավաղի իրենից ստացածը, և սա էլ պիտի վստահի, որ սա ոչ մի այլ ինտենիցա չունի բացի արտահայտելուց այն, ինչ ուզում է: Եվ այս սլաքի համապատասխանությունը ինքն իրեն հենց այդ թափանցիկությունն է, հենց դա է թափանցիկությունը, և դա վերբերվում է ինչպես կոմունիկացիային այնպես էլ գործողությանը, դու վստահում ես նաև տեսնելով գործողությունը, մարդը ասաց ես գնում եմ այսօր Սևան և դու տեսնում ես, որ նա նստեց ավտոմեքենա և գնաց:

Էլի եմ ասում, շատ կարևոր է թափանցիկությունը ճիշտ հասկանալու համար փակ տարածքները ճիշտ հասկանալ, կան փակ տարածքներ դրանք մեխանիզմներն այսպես ասած, այսինքն եթե դու դիմումով ես գնում պետության մեջ, այդ դիմումդ այստեղ ինչ-որ բաներ է լինում հետո դուրս է գալիս և սա փակ տարածքն է, ճիշտ ինչպես որ մեր համակարգչային համակարգում գոյություն ունի փակ տարածք ասենք սերվերը, ո՞վ է տեսնում ինչ է կատարվում այնտեղ սա այդ սերվերն է, եթե դու չգիտես այստեղ ինչ է կատարվում, դու հույս էլ չունես, որ ճիշտ պրոցեդուրայի կենթարկվի քո դիմումը:

Այսինքն՝ այստեղ պիտի թափանցիկությունն ավելանա վստահության ցածր պայմաններում և դու կարողանաս իմանալ ինչպես կարելի է օգտվել հնարավորություն ունենաս օգտվել, իմանաս ինչպես կարելի է ճիշտ օգտվել, իմանաս ինչ կարելի է սպասել, կարողանաս ազդել պրոցեդուրայի վրա, ծրագրի ալգորիթմի վրա, կանոնի, առաջարկել փոխել, եթե պետք է, լավացնել, ուղղել, ավելի արագ դարձնել, այդ որ ասում են գիլիոտին դա նկատի ունեն, ավելորդ պրոցեսները կտրել ուղղաձիգ դարձնել պրոցեսը և այլն:

Ջուլյա Սահակյան

-Պարզ է։ Ժամանակն արդեն մոտեցավ ավարտին, շատ շնորհակալություն։

Գևորգ Տեր-Գաբրիելյան

-Ես էլ եմ շնորհակալ Ջուլյա ջան և բոլոր։